

# Հ Ա Ն Դ Է Ս Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն

Ը Մ Պ Ե Լ Ի Զ Ո Ւ Ր Ք

Հացն, ինչպէս յայտնի է, քողաքա-  
կանացեալ ազգաց աննդեան հիմն հա-  
մարուած է. բայց քան զայն ոչինչ  
նուազ՝ մանաւանդ թէ աւելի մեծ և  
համաշխարհական կարևորութիւն ունի  
լուրն: Վասն զի կան ժողովուրդք որ  
առանց գործածութեան հացի կրնան  
կեանք վարել. բայց չկայ աշխարհիս  
վրայ և ոչ ազգ մը որ կարող ըլլայ ա-  
ռանց ջրոյ ապրիլ: Ուր որ ջուր կը պակ-  
սի՝ այն տեղ նաև մահ և ամայութիւն կը  
տիրեն: Եթէ քննելու ըլլանք մարդուս  
կազմութեան քիմիական բաղկացու-  
թիւնը, կը տեսնենք որ իր ծանրութեան  
գրեթէ կէսը՝ ի ջրոյ կը ձևանայ. նոյնը  
կրնանք բսել ամեն կենդանեաց և բու-  
սոց համար ալ. և այս վերջիններուս  
մէջ կը գտնուին այնպիսիք՝ որ գործա-  
րանական հիւսուածքուն մէջ իրենց  
ծանրութեան չորսին երեք մասամբ  
ջուր կը պարունակեն:

Ուստի նախնիք իմաստութեամբ այս  
հեղուկը, զոր կարելի է կենսական կո-  
չել, տարերաց թուոյն մէջ դասաւորե-  
ցին, երբ տարր բսելով կը հասկընային  
այնպիսի գոյացութիւն մը, որ կենսա-  
կան պայտամուկնքն որոշեալ չափու մէջ  
կը պահէ, և ոչ թէ ըստ մեկնութեան  
արդի տարրագիտաց, որովք կը սահ-  
մանեն տարրն՝ անբաղադրուածելի գոյա-  
ցութիւն մը, որ ուրիշ գոյացութեանց  
հետ միանալով մեզի այսպիսի քարանց,

բուսոց և կենդանեաց ցեղեր կը մա-  
տակարարէ:

Չուրը բովանդակ բնութեան համար  
կենաց էական տարր մ'է, և անոր ներ-  
կայութիւնը կրնայ Լիբիոյ և Մեծին  
Սահարայի անապատներուն մէջ կա-  
նաչազարդ ոստիսներ յառաջ բերել,  
որոնց մէջ թափառական ժողովրդոց  
բազմութիւ ցեղեր կը բնակին. շիթ մը  
անձրևի բաւական է դեղնցած և գրե-  
թէ մեռած խոտերը յարուցանել, և  
կաթիլ մը ցողոյ՝ ծաղկընբեր կը կենդա-  
նացընէ իրենց խամրած բունին վրայ:  
Արարչագործ նախախնամութիւնն որ  
ամեն էակաց այս պէտքս տուաւ, հո-  
գացաւ նաև մեր բնակած հողազնտոյն  
երեք քառորդը ջրով ծածկել, որով ու-  
ղոյ հետ ջուրն ալ ամեն գործարանա-  
ւոր արարածոց վրայ կը տիրէ, որովք  
առանց ջրոյ չէին կրնար ապրիլ. և այն  
ատեն երկրիս մակերևոյթն միայն ան-  
բեր աւազուտներով և ապալեր ժայ-  
ռերով ծածկուած դաշտ մը պիտի ըլ-  
լար, Կարձեալ ջուրն էակաց միայն գոր-  
ծարանաւոր հիւսուածքը չի կազմեր,  
այլ նաև հասարակաց ճամբայ մ'է,  
յորում ուրիշ մարմինք յանհունս մանր  
բաժնուելով կամ լուծուելով, կրնան  
ըստ օրինաց բնութեան՝ իրենց ճիշդ  
գիրքն առնուլ, և իրենց վախճանին ծա-  
ռայելէն վերջը արտաքսուիլ:

Ընդունայն չէ համարել ուրեմն ըզ-

Ղուրբ ժողովրդոց կենաց էական տարր մը . մանաւանդ եթէ քննելու ըլլանք կը տեսնենք որ նախնիք ինչպիսի փոյթ ունէին՝ շատ քօնակով և դիրքու ստա . նալու համար զայն : Երբ շնչուեցան բարեղոնական պետութենէն այն ջըրանցքն՝ որոնցմով ճարտարութեամբ զՂուրբ երկրին մէջ կը տարածէին , ժողովուրդն ալ ցրուեցաւ , և այն բարեբեր գաշտագետիներն անբեղուն ա . նապատներ գարձան , ուր բաց 'ի վայրի կենդանիներէ և խոտերէ ուրիշ բան չի տեսնուիր . Պարսկաստանն՝ որթեմիս տակէտի և Արիստիդէտի գարուց մէջ յունական հասարակապետութիւնները դողացուց , ներկայապէս ստորին կարգի տէրութիւն մ'է . վասն զի Ղուրբ որ հին ատեն իմաստութեամբ կ'ուղղուէին , այսօր անհետացան : Քանի որ դեռ կանգուն էին 'ի Սպանիա Արաբացւոց այնպի փութով կառուցած և խնամած ջրամբարքն , երկրին գաւառներն մշակութեամբ և ձեռագործովք ծաղկեցան , անոնց յաջորդներն զօրաւոր տէրութեանց կարգն անցան և սպանիացի հետեակագորք աշխարհիս վրայ քաջագոյնքն եղան : Բայց երբ Սպանիացւոց անմիտ ընչաբաղցութիւնն անխնամ թողուց զՂուրբ , բաւական չեղան հայրենեաց զօրութիւնը պահելու համար՝ ոչ Մեկսիքոյի հանքն , ոչ Բէրուի ոսկեբովքն և ոչ իրենց աշխարհակալութեանց վրայ պարծիլն՝ թէ իրենց երկրին մէջ երբէք արևն 'ի մուտս չէր խոնարհեր :

Թերևս անտեղի երևի որ ջրոց վըրայ խօսուած ատեն պատմական օրինակներ մէջ կը բերուին առաջիկայ նիւթոյն օգտակարութիւնը ցուցնելու համար . ևս առաւել եթէ թողլով ուրիշ աղգիրը դիմենք առ Հռովմայեցիս , որոնք իրենց քաջութենէն աւելի՝ իմաստուն օրինք գիտցան ընկճել զժամօթ աշխարհքը : Կը տեսնենք որ ասոնք այս նիւթոյս վրայ այնպիսի օրինակ մը տրուած են , որուն հասնելու համար արդէ ժողովուրդները պէտք են դեռ շատ ճամբայ կտրել : Քննելով Հռովմայե

ցւոց վիճակը հասարակաց թուականէն դար մ'ետքը , կը տեսնենք որ առաջին խնամքին էր ժողովրդեան առատօրէն Ղուր հասցընել . այնպէս որ ագուգայից երկայնութիւնը պակաս չէր քան զ500 հազարամէր . և ամեն օր մէկ միլիոն ու կէս խորանարդ մէր Ղուր կը մատակարարէին Հռոմ քաղքին : Կը տեսնենք զարձեալ որ երբէք մեծ քաղաք մը չէին առնել , կամ զաղթականութիւն մը չէին հաստատել , առանց այն տեղերուն առատութեամբ Ղուր բերելու , և իրենց աշխատութիւնը լիովին արդիւնարեւ կ'ըլլար . վասն զի այն քաջաց սերունդն կրցաւ իր զօրութիւնը պահել քանի մ'ինքնակալաց յիմարական գործերովն հանդերձ : Մտաց արթնութեամբ և մարմնոյ կորովով՝ որ զիրենք այնպէս դիմացելուն կ'ընէր բանակի աշխատութեանց , միշտ նոյն անուանի գունդերն լատին արծուոց թռչիլը մինչև ծանօթ աշխարհքին սահմանադուխըր մղեցին :

Բայց պէտք է խորհրդածել այս զարմանալի պարագայիս վրայ . միթէ Հռովմայ օրն արդեօք առողջարար էր . ոչ , մանաւանդ թէ երկրին բարեբերութիւնը կիմային վատառողջութեանը հակառակ էր : Եթէ Սզոստոսի և Ներուասայ ժամանակակցաց հաւատք ընծայուի՝ կը տեսնենք որ նոյն ժամանակէն 'ի վեր տենդը տարածուած էր այն տեղ . և Որատիոս կ'անիծէ զհոկտեմբեր իբրև մանաքեր , յորում , կ'ըսէ , « արք և կանայք առ հասարակ կը գունաթափին » : Փրոնտինոս կը գովէ զՆերուաս՝ որ 'ի ձեռն ջրանցից Հռովմայ ապականեալ օդը մաքրել էր : Ուսկից էր իրենց մարմնոյ այն կորովն , որ այսօր իսկ կը զարմացընէ զմեզ՝ եթէ նկատելու ըլլանք Տրայիանոսի սեան խորաբարդակներուն վրայ անոնց դէմքերն 'ի Հռովմա՝ Կ'երևի թէ մեծաւ մասամբ ջրոյ անխնայ գործածութենէն էր , և ըրած զգուշութիւններնէն՝ երբոր զայն իբրև բմպելիք կը գործածէին . վասն զի իրենց յաղթական չուոց ժամանակն իսկ արգելեալ էր Ղուր խմել առանց

նախ քանի մը կաթիլ քացախով բարխառնելու . և այսպէս պատրաստեալ հեղանիւթս քոսգա (Росса) կ'անուանէին: Եւ այս ալ աւելցրենք որ այնպիսի ժամանակ, յորում, ինչպէս յայտնի է շատ մը հաւատարիմ պատմագրաց խօսքերէն, ապականեալ տենդը կը ճարակէին Հռովմայ մէջ, և դեռ քինքրինական զօրաւոր դեղերն անծանօթ էին, այս հիւանդութեանն առջին առնելու համար ջրէն զատ ուրիշ միջոց չունէին: Եւ իրացընէ ջուրն այն զօրաւոր դեղերէն մէկն է, որ բաց 'ի զծարու անցընելէ՝ արտաքուստ ալ զործածուելով մեծապէս օգտակար է:

Ջուրն իբր առաջին և առողջարար ըմպելիք՝ զծարու անցընելէն աւելի մեծ օգուտ ունի: Սակայն պէտք է դիտնալ որ այս գլխաւոր պայտօնս կատարելու համար քանի մը յատկութիւնք հարկաւոր են իրեն, առանց որոց կրնայ վնասակար ըլլալ, և պատճառ գործարանաց խանգարման: Քանի մը խօսքով ամփոփենք այս կարևոր համարուած յատկութիւնները:

Նախ և առաջ ըմպելի ջուրն պէտք է ամենայնպէս ըլլայ: — Բնական ազգամամբ իսկ պղտոր ջրէ կը խորշկը: Անթափանցիկ ջուրն միշտ իր մէջն անլուծանելի նիւթոյ մաս մը 'ի կախ ունի, որ ընդհանրապէս մետաղէ յառաջ կուգայ և բաղադրեալ է յաւազոյ և 'ի կաւոյ: Թէպէտ և ասոնք հեղանիւթոյն մէջ գրեթէ բացարձակ անլուծանելի մնալնուն պատճառաւ մեր գործարանաց վրայ մահաբեր ազդեցութիւն մը չունին, սակայն այսու հանդերձ պղտոր ջրերն մարսողութեան գործարանաց և աղեաց շատ նեղութիւն կուտան: Բայց երբ հանդիպի որ զջուրն պղտորող գոյացութիւնն գործարանական մարմիններէ կամ անոնց մասնիկներէն կազմուած ըլլայ՝ անհրաժեշտ հարկ է այնպիսի ջուրը բողբոջովին մէկգի թողուլ. վասն զի վերոյիշեալ մարմիններն խոնաւութեան և ջերմութեան ազդեցութեամբ այն յայտնի կերպարանափոխութիւնը կը կրին՝ զոր ապա-

կանեալ խմորումն կ'անուանեն քիմիագէտք. որով ասոնք հեղանիւթոյն հետ խառնուելով՝ թունաւոր և մահտեր կ'ընեն զայն: Առաջ երթալով պիտի տեսնենք որ այս պակասութեան զարման տանելու համար բաւական չէ մըղումը, այլ այնպիսի առիթներու մէջ պէտք է ուրիշ աղբիւրներու դիմել:

Ջուրն ոչ միայն հաստատուն մարմնոյ ամենափոքրիկ հիւլէ մ'ալ 'ի կախ պիտի չունենայ, այլ յստակութեանը հետ մէկտեղ պէտք է բողբոջին անգոյն ըլլայ: Ըմպելի ջրոյ մէջ ամենաթեթեւ գոյնն իսկ նշան է անոր աղէկ չըլլալուն: Այս երկու նկատմամբ ջուրն և ոչ կասկածի մը տեղի պիտի տայ, ամենևին ոչ հոտ պիտի ունենայ և ոչ գոյն:

Եթէ համարիք որ ջուրն այս երեք յատկութիւններս յինքեան պարունակէ, այսինքն անգոյն, անհոտ և անհամ ըլլայ, կրնանք ըստ բաւականի վստահ ըլլալ և ըմպելոյ տեղ գործածել զայն. ոչ երբէք: Մատենագիր մը որ ընդարձակօրէն հիւանդութեանց և մահուան մերձաւոր և հեռաւոր պատճառաց վրայ գրած է, 'ի փորձոյ ուսեալ կ'ըսէ, թէ մեր ամենէն աւելի անգութ թշնամիներն կերակրոց և ըմպելեաց տակ ծածկուած են՝ որոնցմով կեանքերնիս կը պահպանենք: Մեր սննդեան մէջ որ և իցէ պակասութիւն մը վերջապէս ժամանակաւ առողջութիւն ներնուս մեծ վնաս կը բերէ: Հետևաբար բաւական չէ որ ջուրն անհոտ, անգոյն, և անպղտոր ըլլայ, այլ խմելու ծառայելու համար հարկ է՝ որ այս քանի մը բացասական յատկութեանց հետ ուրիշ զբականներ ալ ունենայ:

Նախ պէտք է հաստատուն բարեխառնութիւն ունենայ, ընդ մէջ 80 և 100 հարիւրամասն ջերմաչափին: Նոյնը կ'ըսէ փորձառական բժշկութեան մեծանուն հայրն Հիպոկրատ՝ իր վրձնոց մէջ. « ընտիր են ջուրք եթէ և մառը ցուրաւ ըլլան իսկ ձմեռը տաք »: Այս պատուէրս այն աստիճան ճշմարիտ է որ ըմպելի ջուրն ինչ տարբարա-

նական բաղադրութիւն ալ ունենայ, միշտ փնասակար կ'ըլլայ առողջութեան եթէ իրեն բարեխառնութիւնն հակա-ասկ ըլլայ նոյն ատենուան եղանակին: Ամառ ժամանակ զով ջուրն ա-կործելի կու գայ քմաց, և շուտով կ'անցընէ զծարաւ՝ հանգստութեան զգացում մը պատճառելով, և դիրա-ցընելով մարսողութեան գործարանաց շարժմունքը: Իսկ եթէ շրջակայ օդոյն բարեխառնութեան չափ տաք ըլլայ՝ անհամ և անախորժ կու գայ, շանցը-նէր զծարաւ, թէպէտ և բաւական քա-նակով ալ խմուելու ըլլայ. կերպ մը նեղութիւն կու տայ այլայլելով մարսող-ութեան պաշտամունքը. երկար ատեն գաղջ ջուր գործածելով մարսող-ութիւնը ժամանակէն աւելի կ'ուշանայ, և տաք երկիրներու մէջ կրնայ լուծուիմ, թանջ և աղեաց խցումն պատճառել: Իսկ ձմեռուան եղանակին պաղ ջուրն անհամ կու գայ և մեծապէս անհան-գիստ կ'ընէ: Վասն զի երբոր ջերմա-չափն 0<sup>0</sup> կամ աւելի ալ ցած աստիճան կը նշանակէ, օդոյ անցքին ծառայող մկանաւոր մորթը դիրաւ կը բորբոքի. և պաղ ջուրը կրնայ արեան թղբերուն մէջ թանձրանալուն պատճառ ըլլալ: Ամառ ատեն երբ մարմինը մթնոլոր-տին ջերմութենէն կամ բուռի շարժմամբ մը տաքցած է՝ սառած ջուր խմելը շատ փնասակար կ'ըլլայ. ցրտութիւն մը կը պատէ զմորթը, արտաշնչութիւնը կ'ընդհատի և զանազան հիւանդու-թեանց անթակայ կ'ըլլան շնչատու-թեան անցքն և մարսողական խողո-վակն:

Ուստի ըմպելի ջրոյ բարեխառնու-թիւնն առողջապահութեան գլխաւոր պայմաններէն մէկն է. և ընդհանրապէս հասարակաց կարծիք է՝ թէ ընտիր է ջուրն երբոր իր բնական ջերմութիւնն ըլլայ 10<sup>0</sup> և 11<sup>0</sup>. որով պաղ կ'երևի այն օրերն երբ ջերմաչափն 20<sup>0</sup>—25<sup>0</sup> կը նշանակէ, և տաք՝ երբ քան զ6<sup>0</sup> կամ զ7<sup>0</sup> վար կ'իջնէ: Այս է մէկ պատճառն ալ որ երբ ժողովուրդը կրնան իրենց ինքնաբուրջ ջուր գտնել՝ լաւագոյն կը

համարին զայն քան զգետի ջուրը, ո-րուն բարեխառնութիւնը քիչ կամ շատ մթնոլորտի բարեխառնութիւնն է:

Գոմայլ (Commaille) և Լամպէր (Lambert) գիտնականք քննելով Հոռու-մայ բաղամթիւ աղբերաց ջրերը՝ ա-մառը միշտ զով գտեր են. բայց քա-ղաքին ժողովուրդը ամենէն աւելի կոյս-լոշր (acqua vergine) կոչուածը կը գործածէ, վասն զի ասիկայ միւսերէն 2 կամ 3 աստիճան նուազ տաք է: Այսպէս երչալիկ ջուր (acqua felice) ըսուածը որ 22 հազարամէդր երկայն ջրմուղ մը կ'ընթանայ՝ 16 աստիճան ջեր-մութիւն ունի, երբ շրջակայ օդն է 28 աստիճան: Արեւնդինա բղխածը նաև ա-մառ ատեն 15 աստիճան ունի, մինչդեռ կոյս ջուրն ոչ երբէք 14<sup>0</sup> աստիճան կը հասնի. իսկ Քառլինեան ջուրն որ Պրայ-չիանոյ լճէն կը բղխի՝ 23 աստիճան կը ցուցընէ, երբ մթնոլորտին ջերմու-թիւնը 35 աստիճան կը հասնի:

Ըմպելի ջրոց առողջապահութե փա-սակար ըլլալու համար գլխաւոր յատ-կութիւններէն մէկն ալ այն պիտի ըլ-լայ՝ որ իր մէջն այս ինչ քանակութեամբ օդ ունենայ լուծեալ. բայց պէտք է աւելցընել որ ջրոյ մէջ եղած այս օդն հասարակ օդէն տարբեր կերպով բա-ղադրեալ պիտի ըլլայ. այսինքն շատ պիտի պարունակէ թթուածին և բնած-խական թթուութեամբ: Այս վերջին կաղը քիչ մը համ կու տայ անոր, ստամոք-սին կողերուն ընդլայնման կ'օգնէ, որոնք աւելի առատութեամբ ստամոքային խոզ կը բղխեն, որով լաւագոյն կեր-պով կը կատարուի մարսողութիւնը:

Ըմպելի ջրոց մէջ գտնուած օդոյ և բնածխական թթուութեան ծագումը մի և նոյն տեղէ չէ. թթուածինն և ան-կենդան կազն անշուշտ մթնոլորտէն յա-ռաջ կու գան. այլ բնածխական թթու-ութեան առաջնուց ծածկեալ կը գտնուի այն հողերուն ծակտեաց մէջ ուսկից ջուրը կը բղխին: Պոսէնկոյ (Boussin- gault) և Լէվի (Lewy) տարրադէտք ցու-ցըցեր են որ հողոյ ծակտեաց մէջ փու-կուած օդն միշտ աւելի կը պարունակէ

ածխային նիւթոց կիզման մնացորդ քան մեր շնչած օդը. վասն զի մինչդեռ ասոր մէջինը 4 տասը հազարերորդի չի հասնիր, անոր մէջ երբեմն մինչև 22 կամ 24 առ 100 կը գտնուի :

Արքերաց և ջրհորոց ջրերը միշտ աւելի բնածխական թթուութեամբ ունին քան զգետոց, բայց նուազ թթուածին կը բովանդակեն: Բաւական չեն այսչափ յատկութիւնք ըմպելի ջրոց համար, պէտք է որ քանի մը հանքային գոյացութիւններ ալ ունենան, բայց ոչ այնպիսիներ որ զլուրը անըմպելի ընեն: ազատ ըլլան բոլորովին գործարանական նիւթերէ և հիւանդութիւն պատճառող սերմունքներէ:

Ամենահարկաւոր նիւթ մ'ալ ըմպելի ջրոց համար կիրն է: Շօսայ (Chosbat) և Պուսէնկոյ փորձած են որ ջրոց մէջ գտնուող 'ի բնէ անգործարանաւոր մարմիններն գործարանաւորութենէ կը սպաւին. որով կենդանական տնտեսութեան մէջ գտնուած ամեն աղային գոյացութիւն օգտակար կ'ըլլայ եթէ հիւսուածոց մէջ գտնուի. և այս բանս վերոյիշեալ վերջին բնայլովը յայտնի ցըցուց, երբ տեսաւ որ խոզ մը 93 օրուան մէջ 64 կրամ կիր սպաւոր էր, որ իր խմած ջրերէն յառաջ եկած էր:

Բայց լաւ գիտնալու է որ կիրն օգտակար ըլլալու համար երկբնածխատ վիճակի մէջ պէտք է որ ըլլայ: Իսկ թէ որ կիրն տակ գած կամ ծծմբատ կրոյ ըլլայ, այն ատեն փաստակար կրնայ ըլլալ հետեւեալ պատճառին համար: Ըմպելիքն ստամոքս հասնելով կերակրովք հանդերձ, եթէ ծծմբատ կրոյ կը պարունակէ՝ ասիկայ ծծմբուկ կը դառնայ, սննդական նիւթոց հետ շօշափմամբ իր թթուածինը կորսնցընելով, և այն վիճակին մէջ կերակուրը որ մարսողութեամբ խմորեալ հետ են, բայց 'ի փքախտութիւն պատճառելէ՝ միզի մէջ անլուծանելի մարմին մը դառնալով գիւրաւ երիկամանց աւազոյ և փամփշտամրոյ անհանգստութիւնները կը պատճառեն:

Շատ անգամ մագնեզիայի աղերն

ալ կրնան փոսնդաւոր ըլլալ. բաց 'ի ըմպելոյն թեթեւ գառնութիւն մը տալէ, զոր զգայուն քիմք գիւրաւ կիմանան, անոնք ալ նոյն վերոյիշեալ հիւանդութիւնները կը պատճառեն: Երիկամանց հիւանդութեան բնալուծական պատճառաց վրայ եղած երկայն զննութիւններուն մէջ միշտ տեսնուեր է՝ որ երբեք մագնեզիան կրէն չի բաժնուիր: Եւ այս կարծեալ համարտուելունը ապացուցանելու համար մասնաւոր դէպք մը յիշեմք: Իտալիոյ մէջ Ռէճճիոյ Էմիլիոյ գաւառին Գավրիակոյ գեղը կրոյ ծծմբատով խառն ջրեր կան, և դժբաղդարար տեղացուց շատերն երիկամանց ախտը կը կրեն: Միայն ազարակի մը բնակիչքն այս հիւանդութենէն ազաւ էին. և կասկածելով որ ասոր պատճառը ջրերէն ըլլայ, ստուգելին և իմացան որ այն տեղոյն ջրհորին ջուրը մագնեզիա չունէր:

Դժուարին է, առանց տարրաբանական փորձերու, ըմպելի ջրոյ մէջ եղած լուծեալ օդոյ քանակն իմանալ. բայց ամենադիւրին օրինակ մ'ունինք իմանալու համար՝ թէ արդեօք ջուրը կիր և մագնեզիա ունին: Եթէ այսպիսի ջուրը օճառով խառնենք, կը տեսնենք՝ որ առանց փրփրալու երեսը մակարդ մը կը կապէ: Ուրիշ փորձ մ'ալ այս է, որ մագնեզիական, մանաւանդ կրային աղերով յագեալ ջրերն ընդեղէն չեն եփեր: Այս երկու երկոյթիներուն ալ պատճառները տարրաբանք օճառի և ընդեղինաց սերմանց կազմութեան մէջ գտած են. օճառը ծովային բուսոց մոխրաջուրը կը պարունակէ ճարպով հանդերձ. այս վերջինս կը զատուի մոխրաջուրէն և կրոյ հետ միանալով անլուծանելի կը դառնայ, և չկարենալով զլուրը մածոցիկ ընել՝ չի փրփրար: Իսկ ընդեղինացն ուրիշ կերպ է. բակայի, լուպիայի, սիսուան և ուրիշ ընդեղինաց հունտերն սպիտածէ գոյացութիւն (albuminoide) մ'ունին, որ կրոյ հետ եղբերային կարծր գոյացութիւն մը կը կազմէ, և պատեւով անոնց մաշկերը՝ եռացեալ ջրոյ մէջ

անթափանց կ'ընէ, որով որչափ ալ տարցուելու ըլլան՝ կարծր կը մնան:

Ըմպելի ջուրք պէտք չէ պարունակեն նաև բորակ: Այս գոյացութիւնս՝ ջրոյ մէջ գործարանական մարմնոց գտնուելուն յայտնի նշան ըլլալէն զատ, շատ տարի գործածուելով՝ երկկամանց վրայ փնասակար ազդեցութիւն կ'ընէ, մանաւանդ արտական պաշտամունքը շատ անգամ սաստիկ կ'այլայլէ: Բայց ամեն բանէ աւելի գործարանական մարմիններէ ազատ պիտի ըլլան ըմպելի ջուրք սակայն հարկ է զանազանութիւն մ'ընել: Բուն գործարանական կոչուած մարմիններն յատուկ այլայլութիւններով զլուրերը թթուածնէ կը մերկացնեն, և առատօրէն ծծմբական թթուութեամբ կը ճոխացնեն զանոնք. և մնացորդ մը կը թողուն, յորում՝ օտարասնուիչ (parasite) բուսոց և կենդանեաց սերմունք ծնանելու յարմար տեղ կը գտնեն և մեր գործարաններէն սընունդ առնելով՝ կեանքերնիս կը կարճեցնեն: Զարհուրելի է, կ'ըսէ հեղինակ մը, փոքրկան մը ոյժը, և կրնանք յաւելուլ, թէ ալ աւելի զարհուրելի է բնութեան մէջ փոքրագունի ոյժը, զոր մանրադիտակը միայն կրնայ մեզի ցուցնել, և այն ժամանակ միայն կը ցուցնէ՝ երբ կենդանին կամ բոյսն արդէն իր ծայրագոյն աճմանը մէջ ըլլալով իր սարսափելի կոտորածները գործած է: Վասն զի այն վայրկենէն յորում բժըկութիւնն իրեն օդնական առաւ զընալուծական հակազդակները և ըզմանրացոյցը՝ մարդուս կենաց փնասակար արարածներու ու չար ոգոց նոր աշխարհք մը առջնիս բացուեցաւ: Այս յանհունս մանր և յանհունս փնասակար էակներն են որ հիւանդութիւնները կը տարածեն, և շատ անգամ ոչ միայն ընտանիքներ կ'ամայացնեն, հապա ամբողջ քաղաքներ և բազմամարդ գաւառներ կ'անգաւակեցունեն: Եւ արգեօք ուր են ասոնց բոյներն յորս կը պարանիս գրեթէ ամենքն ալ կամ մեր շնչած օդը կ'ընտրեն, կամ զլուր, և շատ անգամ նոյն ջուրը զոր ծարաւ-

նիս անցընելու կը գործածենք: Նոյն իսկ ցօղոյ կաթիլի մը մէջ փնասակար բուսոց սերմունք կը ժողուին, որ ճախնային ժանտահոտութենէ (miasme) հարուածեալ երկիրներուն համար սուկում մ'է, և այս սերմանցմէ տասը հազարի չափ կը համրուին այն կաթիլին մէջ: Օրը քանի կաթիլ ջուր կը խմենք, որոնցմով առանց գիտնալու կը մոցունենք այն սերմունքը մեր գործարանաց մէջ, որով զանոնք կը տկարացնենք, ու կը զրկենք իրենց կորովութենէն, և շատ անգամ մահը ներս կը մոցընենք:

Այս մահաբեր սերմունքն ալ գտնուելու համար ամենապարզ փորձ մ'ունինք. լեցընենք այս կասկածելի ջուրը նոր և խնամքով մարրուած ապակեայ անօթի մը մէջ. ձգենք ասոր մէջ, երկու կամ երեք գնտիկ շաքար, 5—7 կրամ ծանրութեամբ. աւելցընենք այս ջրոյն վրայ, որուն չափն պիտի ըլլայ 100—150 խորանարդ հարիւրորդամէդր, քիչ մը լուսածնաստ ամփնիագի, և դնենք ամբողջը 18°—22° ջերմութեան տակ: Եթէ ջուրն գործարանական գոյացութիւն չի պարունակեր՝ ամենեւին չի պղտորիր. իսկ եթէ քիչ կամ շատ գործարանական փնասակար նիւթեր ունենայ՝ երթալով կը պղտորի և կաթնազոյն կը դառնայ, Բայց աւելի յայտնի կ'իմացուի գործարանական մարմնոց գոյութիւնը, երբ այս փորձէս ետքը դիտենք մանրացուցով ջրին մակերևութիւն վրայ ձևացած մակարդը, կը տեսնենք բազմութիւն մը նախագործարանաբուութեանց (protorganisme), որոնք կրնան զլուրը զանազան հիւանդութեանց պատճառ ընել:

Սակայն թերևս մէկն հարցընէ, թէ ուր գտնուել է այնպիսի ջուր որ այս պահանջուած պայմաններն ունենայ: Երեք են աղբիւրներն՝ որոնցմէ կրնանք ըմպելի ջուր ստանալ. այսինքն է, գետերն, ջրհորներն և աղբերակունք:

Քննենք առանձնաբար այս աղբիւրները, և պիտի տեսնենք որ ինչպէս իւրաքանչիւրն ալ այն պահանջուած յատկութիւնները կրնայ ունենալ: Նախ

գետերէն սկսի՛նք, Գետոց ջրերը քանի մը ընտիր յատկութիւններ ունին, բայց միանգամայն նաև բաւական պակասութիւններ ալ ունին: Հասարակօրէն չափաւոր կերպով օդահարեալ են, ոչ ճոխացեալ աղային լուծուած մարմիններով. աղէկ կը վերափրին օճառով, և դիւրաւ կ'եփեն զքնդեղէնս: Բայց այս աղէկութեանց առջև այնպիսի անպատեհութիւններ ալ կը ներկայացնեն, որ գրեթէ ուրիշ աղբիւրներու ամեն դիմել կըցողներն մէկդի կը թողուն զասո՛նք: Անպատեհութիւնքն են հետեանալեւորն. ա. բարեխառնութիւնն. գետերն ընթանալու ժամանակին միշտ օդոյ հետ շոյափուելով՝ շրջակայ մթնոլորտին ջերմութեան աստիճանը շուտով կ'առնուն: Արդ գետե՛նք՝ որ մթնոլորտին հաւասար բարեխառնութիւնը հակառակ է գործածած կանոններնուս, որոնց պատճառները վերագոյն բացատրեցինք. բ. շատ անգամ գետոց ջրերը պղտոր կ'ընթանան. ուստի առանց կանխաւ մզուելու՝ ոչ իբրև ըմպելիք և ոչ կերակուր եփելու կը ծառայեն. արդ մշումը երկու մեծ վնաս կը գործէ. առաջինն այն է՝ որ մեծաւ մասամբ կը ցրուէ հեղանիւթոյն մէջ լուծուած կազերը, որոնք զայն դիւրատար կ'ընէին ստամոքսին և քմաց խորթահամ:

Շատ վնասակար է եթէ գետը բնակուած տեղերէ, մանաւանդ թէ որ բազմամարդ կեդրոններէ անցնելու ըլլայ: Այն ատեն մզումն ալ բաւական չըլլար: Անգղիա՝ առողջապահութեան բարձրագոյն ժողովոյ մը բժիշկներէն ինամբով ստուգուած դէպք մը այս բանն բացայայտ կ'ապացուցանէ: Երկու ընկերութիւնք Լոնտրայի այլ և այլ թաղերուն ջուր կը մատակարարէին. այս ընկերութեանց մէկը կ'ընդունէր զջուրը այն բաղմամարդ քաղքին մէջէն դեռ չանցած, իսկ միւսն՝ անցնելէն ետքը: Երկու անգամ մաղձախտը Լոնտրայի մէջ կոտորած ըրաւ. այսինքն մէկ մը 1849 թուին, մէյմ՝ ալ 1852 թուին. արդ քննելով տեսնուեցաւ որ յամին

1849 առաջին ընկերութեան ջուր մատակարարած թաղերուն մէջ մեռելոց թիւը առ նուազն երեք անգամ աւելի եղաւ, և ստորև քան երկրորդ ընկերութեան ջուր մատակարարած թաղերուն մէջ: Երկրորդ անգամ յամին 1852, երբ այս մահացու հիւանդութիւնը նորէն ճարակեցաւ, առաջին ընկերութիւնն իր ծառայութիւնը կատարելագործելով՝ ջուր մատակարարած թաղերուն մէջ մեռելոց թիւը 125էն առ 1000՝ իջեր էր 37, մինչդեռ միւս ընկերութիւնն ուշադրութիւն չընելով բժշկաց խորհուրդներուն, իր մեռեալներն 118էն առ 1000 եղան 136, և սակայն երկու ընկերութիւններն ալ ջուրը կը մզէին:

Երկրորդ անպատեհութիւնն է չափազանց ծախքն. Գաողիացիին Տիւմա՝ տարրադիտաց նեստորն յերոպա, կ'ըսէ. « Թիրաւի ես պիտի չըլլամ՝ զխտութեան և մարդկային ճարտարութեան սահմանն զնողն. օր մը պիտի գայ՝ որ անտարակոյս մեծ քանակաւ և խնայողութեամբ զջուրը մզելու միջոցներ պիտի գտնուին: Բայց քանի որ աւագով կամ ուրիշ արուեստական մզմամբ ուղեցին 100000 խորանարդ մէդր ջուր ստանալ, անկարելի եղաւ զանիկայ կատարելագէս գտել, այնպէս որ ամեն այս ջուրը գործածողն ստիպեալ է դարձեալ անական քամոցէ անցընել զայն »:

Արդ կը մնայ քննել թէ ինչպէս ջրհորոց ջուրն առողջապահութեան կանոնաց կը համապատասխանէ: Այս մասին վրայ կ'արժէ քիչ մը խօսքն երկընցունել, որովհետև ընդհանրապէս ժողովրդեան համար ծարաւ անցընող աղբիւրն այս է, բայց արհեստ, որ նաև ամենէն անմաքուր աղբիւրն է՝ որու կը դիմեն մանաւորապէս քաղաքաց մէջ: Գիմիազէտ մը կը համարձակէր ըսելու. « Գաղաքք՝ վառարան ապականութեան և մեծամեծ աղբիւրք կրնան համարուիլ »: Արդ երևակայե՛նք թէ ինչպիսի կրնան ըլլալ այն գետիններուն ջրհորոց ջրերն, ուր անբաւ տարիներէ՛ ի վեր այնչափ ազտեղութիւնք

դիզուած են. աւելցունենք դարձեալ մասնական հանգամանքները, և անոյշ ջրոյ հորերու և լուալեաց մէջ եղած յաբաբերութիւնները: Երկու հորոց ալ յատակը դիտենք, որոնք յաճախ մէկ մէկու մօտ կ'ըլլան. կը տեսնենք՝ որ միշտ երկրորդին մակերևոյթն առաջինէն բարձր է. և քնչ է արդեօք այս սովորական դիպուածիս հետեանը: — Երկիրը շարունակ ծծելով գհեղուկ մասը՝ վերջապէս կենդանի ջրոյ հորին մէջ կը զեղու զայն: Բայց ոմանք ասիկայ անկարելի կը համարին, հիմնելով իրենց կարծիքը երկրիս այն յատկութեան վրայ, որ ունի ջրոյ մէջ լուծուած մարմինները ծծելով յագելու, և հեղուկին անցիցն ընդգիմանալու: Հողոյ խաւերուն ծծողական զօրութիւնն այն ժամանակ իրական է՝ երբոր մարմինը մետաղական կերպարանք և հակազգեցութիւն ունենան, ուստի բաղադրութիւննին համեմատաբար շատ աւելի պարզ ըլլայ: Սակայն գործարանական գոյացութիւնք այս ծծողական զօրութեան չեն հնազանդիր. մանաւանդ գործարանաւորեալ մարմնոց սերմունք՝ երկրիս ոչ ձգողական զօրութենէն և ոչ ամենատկար ծակոտկէնութենէն կ'արգելուին:

Այս սերմունքն այնպէս մանր և բարակ են՝ որ լոնտրայի Ֆրանքլանտ (Frankland) տարրագէտն, կրկին կրկին մզմանէ ետքը ջրոյ մէջ դարձեալ գտնելով անոնցմէ՝ կը ստիպուէր ըսելու. « Գործարանական աղսն որ ջրոյ մէջ կը գտնուի, անհրաժեշտ 'ի կախ վիճակի մէջ պէտք է ըլլայ. վասն զի չենք կրնար ըմբռնել գործարանաւորեալ մարմիններ՝ որ միանգամայն հեղանիւթոյ մը մէջ լուծուին: Բայց ասկէ չի հետևիր՝ որ միայն մզմամբ կարելի ըլլայ գատել զանոնք 'ի ջրոյ »: Իրաւցընէ յայտնի է որ քանի մը անասնիկներու սերմունքը ջրէն հանել կարելի չէ, նոյն իսկ ընտրելագոյն քամոցներու օդնութիւն. և ստուգուեցաւ՝ որ մաղձախնային թոյնն կրնայ ջրոյ հետ խառն ձալ՝ առանց արդիւրեւելու մզմամբ:

Յայտնապէս կ'ընդունին այսօրուան օրս բժիշկը՝ թէ ասիական ախտն ինչպէս դիւրաւ փոխադրական է նաև առողջ անձանց վրայ, եթէ միայն ախտացելոց ապաւիժութեամբք աղտոտին. և շատ ատեն չէ որ Անգղիոյ առողջապահութեան բարձրագոյն ժողովը, 1854 թուին այնան ժամանակ Wardow-Street ըսուած թաղին մէջ մաղձախտէ մեռելոց վրայ քննութիւն ընելով, այն ահաւոր կոտորածին պատճառ Broad-Street թաղին ջրհորներուն անմաքուր ջրերը գտաւ. որոնց մէջ տարրագէտք՝ 85 հազարորդակրամ գործարանական նիւթ գտան:

Եւ այս դիպուածս աւելի հաստատութիւն առաւ՝ Բարիզ հանդիպած նման պատահարէ մը: Յամին 1849 մաղձախտը Մոնմարգրը թաղին մեծ ջարդ տուաւ, մինչդեռ 1856 թուին ամենեկին ֆիասս մը չըրաւ. քնչ էր այսպիսի աննման երևոյթներուն պատճառն. վասն զի քաղաքափարչութիւնք ինչուան նոյն ժամանակ գործածուած ջրհորներուն տեղ՝ Տիւիի (Dhuys) աւելի մաքուր ջրերը փոխանակեց:

Միայն տարափոխիկ բուռն ախտերը չեն որ աղէկ ջրերով կը հալածուին. յայտնի եղաւ՝ որ զմարդ տանջող երկու սովորական հիւանդութիւններն՝ ժանտատենդային (typhoïde) և պալարային (tuberculeuse) ախտք աղէկ ջրերու միջոցով կ'անհետանան. և այս բանիս ոչ թէ մէկ այլ զանազան օրինակներ կան: Այսպէս Մոնագոյի քանի մը թաղեր քսան տարի շարունակ ժանտատենդէ չարչարուելէ ետքը, վերջապէս ազատեցան՝ թողլով հորերու ջրերը, որոնք Յ հազարակրամ նախագործարանաւորութեան սերմամբ յագեալ գործարանական մարմին կը բուսանդակէին: Դեռ աւելի պայծառ օրինակ մը կը ներկայացընեն մեզի Մեծին Բրիտանիոյ առողջապահութեան վերագոյն Ատենին դիտողութիւնքն: Այն երկրին տասուերկաւ տարբեր կլիմայ և վիճակ ունեցող քաղաքներու մէջ մահացուութիւնն սարսափելի կերպով կը

հասնէր երբեմն 33 առ 1000: Բայց մեծամեծ ջրաբաշխական աշխատութեամբք աղտեղի ջրերէն մաքրուելով այս քաղաքները՝ զգալի կերպով մեռելոց թիւը նուազեցաւ. և քիչ ատենէն Սոլիգպրիի 9030 բնակչօք փոքրիկ քաղաքը ժամատենդը նուազեցաւ 75 առ 100, ինչպէս պալարային ախտն ալ 49 առ 100: Այս թուոց առջև ամեն տարակոյս կը փարատի, թէ ինչ խնամք հարկաւոր են ընել ըմպելի ջրոց համար. բայց ինչպէս տեսանք՝ ջրհորք չեն կրնար զայն մատակարարել մեզի: Ուրեմն համեմատութեամբ գետոց և ջրհորոց՝ աղբերականց ջրերն ընտրելագոյն են: Հասարակօրէն կը պարունակեն ասոնք օդ, բնածխական թթուութեամբք

և կիր՝ բնածխական վիճակի մէջ. և երկրիս կեղևին խորին խաւերէն բղխելուն համար, ուր բարեխառնութիւնն հաստատուն է, ամառը զով իսկ ձմեռը տաք կու գան մեզի: Եւ եթէ ասոնք կրոյ բնածխատով յագեալ ալ ըլլան, անցքերնուն ժամանակ շարունակ շարժմամբ՝ չափազանցը մէկզի կը թողուն, իրենց պահելով ընտիր յատկութիւններն:

Կան դեռ ուրիշ մեծամեծ փաստեր ալ յառաջ բերելու, բնակելի ընտիր ջրոց օգտակարութիւնները ապացուցանելու համար, սակայն այս էջերուն անձկութիւնը չի ներբեր, անոր համար վերջ կու տանք խօսքերնուս:

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Բ

Արքանտակք Հրատին. — Անցեալ սեպտեմբերի մէջ լրագիրներն համաւեցին թէ Հրատ մուրակին չորս զին երկու արբանեակ կամ լուսին գտնուեր են. անոր համար հին գրեանք բնուեցան, տեսնելու թէ արդեօք ժամանակաւ յիշատակութիւն մը եղած կայ այսպիսի գիւտի մը վրայ:

Սակայն բոլորովին անօգուտ աշխատանք էր փնտռել թէ անցեալ գարու մէջ արդեօք այսպիսի արբանեակք տեսնուեր են: Վասն զի նոյն ժամանակի տեսաբանական գիտութիւնն դեռ ևս անկարող էր այնպիսի առարկաներ տեսնելու երկնից երեսը, և բանաստեղծ մը կամ իմաստասէր մը կրնար ըսել ու գրել ինչ որ կ'երեակայէր, սակայն աստեղաբաշխ մը պէտք օւնէր արդեամբ տեսնելու կամ վարդապետութեամբ հետեցունելու յառաջ քան հաստատելու թէ կայ երկնային նոր մարմին մը:

Հրատ մուրակն, որ արևային դրու-

թեան մէջ անմիջապէս երկրէս ետքը կու գայ, այս սեպտեմբերի սկիզբները ընդդիմակաց էր և գրեթէ արևամերձ, այսինքն փոքրագոյն կամ կարելի փոքրագոյն հեռաւորութիւնն ունէր երկրէս, և շատ տարի կար որ չէր պատահած այսպիսի ընդդիմակացութիւն մը՝ նպաստաւոր դիտելու զմուրակը: Անոր հեռագոյն արբանեակը գտաւ Ասափ Հոլ անուշով դասատուն՝ Ուոչինկոնի նաւային դիտարանէն, 11 օգոստոսի 1877 զիչերը: Ամպերն արգելք եղան այն գիտնականին կատարելագէտ ստուգելու թէ արդեօք տեսածն արբանեակ մ'էր. բայց 16 օգոստոսի գիչերն, յետ երկու ժամ գիտելու, կարող եղաւ որոշելու այն արբանեակին վրայ տեղափոխութիւն մը նկատմամբ մուրակին: Նոյն Հոլ դասատուն 17 օգոստոսի գիչերը գտաւ միւս արբանեակն ալ՝ մօտագոյն առ մուրակն: Երկրորդ օրն, 18 օգոստոսի, Հոլ հեռագրաւ հաղորդեց իր այս